# ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ աշակերտներ, ուսանողներ,

Հարգարժան մանկավարժներ,

Հարգելի ծնողներ,

Գիտելիքի օրվա առթիվ ընդունեք իմ, քաղաքապետարանի աշխատակազմի, համայնքի ավագանու ամենաջերմ բարեմաղթանքներն ու շնորհավորանքները:

Մեկնարկեց 2017-2018թթ. ուսումնական տարին, թող այն լինի բարեփոխումների, կրթության ոլորտում իրականացվող ծրագրերի և նորարական ձեռնարկների առումով հիշարժան և տարբերվող, մեր երկրի և Մարտունի քաղաքի համար պատրաստի պիտանի ու արժանավոր սերնդի:

Հատկապես ջերմորեն եմ շնորհավորում դպրոցի և բուհի շեմն առաջին անգամ ոտք դնողներին՝ նրանց մաղթելով լուսավոր ճանապարհ և բարձր առաջադիմություն, իսկ մանկավարժներին, ում վստահված է սերունդների կրթության և դաստիարակության դժվարին գործը, հաջողություններ իրենց շնորհակալ աշխատանքում, մենք գնահատում ենք ձեր նվիրական աշխատանքը:

Գիտելիքը մեր օրերի զենքն է, թող այն լինի մեր քաղաքի առաջ մղվելու կարևոր օղակների հիմքը:

Բարի և ուսումնաեռ ուսումնական տարի եմ մաղթում: Մենք արժևորում և հպարտանում ենք մեր քաղաքի, մեր երկրի շնորհաշատ զավակներով, ձեր կողքին ենք յուրաքանչյուր նախաձեռնությունում:

Կրթվեք և եղեք պիտանի ձեզ և բոլորիս համար:

Հարգանքներով՝

Մարտունի համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան